ԱՐՄԵՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱԼՈՅԱՆ

Միջազգային գիտությունը կրեց ցավալի և անդառնալի կորուստ: Կյանքից հեռացավ հայրենական գիտության կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ ակադեմիկոս Արմեն Անուշավանի Գալոյանը:



Արմեն Անուշավանի Գալոյանը ծնվել է 1929 թվականի մայիսի 1-ին ՀՀ Արթիկի շրջանի Անուշավան գյուղում բժշկի ընտանիքում: 1947 թվականին գերազանցությամբ ավարտել է Արթիկ քաղաքի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետ: 1953 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, ընդունվել ասպիրանտուրա "Ֆիզիոլոգիա" մասնագիտությամբ և գործուղվել Մոսկվա, Կոլցովի անվան կենսաբանության զարգացման ինստիտուտ, որտեղ ակադեմիկոս Խ. Կոշտոյանցի ղեկավարությամբ 1956թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1957-1958թթ աշխատել է ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի ուղեղի ինստիտուտի հիստոքիմիայի լաբորատորիայում: 1958թ վերադարձել է Հայաստան և աշխատել Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաքիմիայի բաժնում, որը ղեկավարում էր ակադեմիկոս Հ.Խ. Բունիաթյանը:

1961թ. կենսաքիմիայի բաժինը վերածվեց Կենսաքիմիայի ինստիտուտի, որտեղ ակադեմիկոս Ա. Գալոյանը անցել է ավագ գիտաշխատողի, լաբորատորիայի վարիչի, բաժնի վարիչի, ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի, ապա 1982թ. մինչև 2006թ. Ինստիտուտի տնօրենի ուղին: 1981-1982թթ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ միաժամանակ աշխատել է երկու՝ Կենսաքիմիայի և Փորձարարական կենսաբանության ինստիտուտների տնօրեն: 1973թ. Աշխատել է Նյու Յորքի Նեյրոքիմիայի ինստիտուտի տնօրեն Ա. Լայթայի հետ, Ռոկֆելլերի համալսարանում, ինչպես նաև Սան Դիեգոյի Սոլկի ինստիտուտում նոբելյան մրցանակի դափնեկիրներ Ռ. Գիլմենի և Ա. Շալլիի հետ: Հիմնադրման օրից՝ 1982 թ-ից հանդիսացել է Հայաստանի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների համատեղ "*Նեյրոքիմիա*" ամսագրի գլխավոր խմբագիր:

Ակադեմիկոս Ա. Գալոյանի անվան հետ է կապված ժամանակակից նեյրոկենսաբանության երկու նոր ուղղությունների՝ նեյրոէնդո-

կրին սրտաբանության և նեյրոէնդոկրին իմունաբանության զարգացումը:

Դեռևս անցած դարի 60-ական թթ. Ա. Գալոյանը առաջ քաշեց ուղեղի պեպտիդային հորմոնների առաջացման նախահորմոնային տեսությունը, ըստ որի սիրտը ևս համարվում է ներզատիչ օրգան, հորմոնագոյացման աղբյուր՝ նախասրտերի գանգլիոնային նյարդաբջիջները արտադրում են պեպտիդային հորմոններ: Հետագայում նա հայտնաբերել է սրտի արյան շրջանառության պսակաձև անոթների տոնուսը կարգավորող հորմոնները, նախասրտերից անջատվել են 7 սպիտակուցներ, որոնք հզոր ազդեցություն ունեն պսակաձև անոթների տոնուսի կարգավորման վրա: Կարդիոակտիվ նեյրոհորմոններից մեկը՝ *նեյրոհորմոն C*-ն անցել է նախնական կլինիկական հետազոտման փուլը Խորհրդային Միության մի շարք կլինիկաներում՝ սրտամկանի ինֆարկտի և սիրտ-անոթային այլ հիվանդությունների բուժման համար:

Վերջին 15 տարիների ընթացքում ակադեմիկոս Ա. Գալոյանը իր աշակերտների հետ միասին զարգացրել է նաև նյարդակենսաբանության մի այլ կարևոր ուղղություն՝ նեյրոէնդոկրին (նյարդաներզատիչ) իմունաբանությունը: Ուղեղում հայտնաբերվել են մի շարք նոր իմունամոդուլյատորներ, որոնց քիմիական կառուցվածքները ամբողջությամբ պարզված են, իսկ որոշ պեպտիդային բնույթի իմունամոդուլյատորներ՝ մասնավորապես պրոլինով հարուստ պոլիպեպտիդները՝ գալարմինը և նրա կառուցվածքային անալոգները արդեն սինթեզվել են և նախապատրաստական աշխատանքներ են տարվում կլինիկական փորձարկումներ սկսելու՝ իմունային, վարակիչ, ուռուցքային, նյարդային և սիրտ-անոթային մի շարք հիվանդությունների բուժման համար:

Ակադեմիկոս Ա. Գալոյանի աշխատանքները մեծ ճանաչում և հեղինակություն են վայելում ողջ աշխարհի գիտական հասարակությունների կողմից: Ակադեմիկոս Ա. Գալոյանը հեղինակ է 4 մենագրությունների, ավելի քան 600 գիտական հոդվածների: 2012 ԱՄՆ-ի *Springer* հրատարակչությունը լույս է ընծայել նրա «Ուղեղի իմունային համակարգի ազդանշանային մոլեկուլները աէրոբ և անաէրոբ վարակների դեմ» մենագրությունը, որտեղ ամփոփվել են գալարմինի հակաբակտերիալ ազդեցության վերաբերյալ գիտական աշխատանքների արդյունքները: Ուղեղի նոր հորմոններով և իմունամոդուլյատորներով զբաղվում են հանրապետության, ինչպես նաև արտասահմանյան (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա) բազմաթիվ գիտական կենտրոններ:

Ակադեմիկոս Ա. Գալոյանը եղել է Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի նախագահ, միջազգային բազմաթիվ գիտական ընկերությունների անդամ, արժանացել է Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան խոշոր պարգևների և կոչումների: 2012 թ., հաշվի առնելով գիտության մեջ նրա բացառիկ ներդրումը, Ա. Գալոյանը ընտրվեց Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ և պարգևատրվեց Մ. Լոմոնոսովի անվ. շքանշանով:

Ակադեմիկոս Ա. Գալոյանը մեծ ավանդ ունի հայրենական նյարդաքիմիայի և նյարդակենսաբանության առաջատար ուղղությունների զարգացման գործում: Գիտական գործունեությանը զուգահեռ նա մեծ ուշադրություն է դարձրել գիտական կադրերի աճին:

Ակադեմիկոս Ա. Գալոյանի մահը լայն արձագանք գտավ միջազգային գիտական հանրության շրջանում, ստացվել են բազմաթիվ ցավակցական հեռագրեր աշխարհի ականավոր գիտնականներից: Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ Ռոջեր Գիլմենը ակադեմիկոս Ա. Գալոյանի հիշատակին նվիրված *Neurochemical Research* ամսագրի բացման խոսքում համոզմունք է հայտնել, որ նրա գործը և ներդրումը կվերապրի նրան և կզարգանա հետագա տարիներին:

Ակադեմիկոս Ա.Ա. Գալոյանի հիշատակը մշտապես վառ կմնա իրեն ճանաչողների, աշխատակիցների և աշակերտների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն,
ՀՀ Բունիաթյանի անվ. բիոքիմիայի ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրություն